# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐ

Տնտեսական զբաղմունքների ու կենցաղը ուսումնասիրելիս անհրաժեշտ է լեռնաշխարհը բաժանել երկու գոտու՝ լեռնադաշտային և լեռնային։ Լեռնադաշտային նկատվում են Արածանիի աջափնյա և ձախափնյա Բալուի, Չարսանջակի և մասամբ Ճապաղջուրի շրջանները, իսկ լեռնային՝ ինքնանկախ Դերսիմի լեռնաստանները։

Չարսանջակում, Բալուում, Մեծկերտում և Բգիի լեռնադաշտային շրջաններում ապրողները նստակյաց էին, ուր նույնիսկ օգտագործվում էր սայլը, իսկ լեռնային շրջաններում ապրողների մեծ մասը կիսանստակյաց էր, մնացյալները՝ նըստակյաց։

Կիսանստակյաց էին նրանք, որոնք առավելապես անասնապահությամբ էին պարապում, ամառը բարձրանում էին սարերը և բնակվում այնտեղ, իսկ ձմեռը վերադառնում էին գյուղ։ Դերսիմում քոչվորներ չկային։

Նստակյացների գլխավոր զբաղմունքը հողագործությունն էր, մասամբ անասնապահությունը, իսկ շրջկենտրոններում ապրողները պարապում էին արհեստներով, այգեմշակությամբ, պտղամշակությամբ և առևտրով։

Այս գլխում տրվում է Դերսիմի հավաքական պատկերը, նկատի ունենալով լեռնային գոտին, որը գրեթե մնացել էր ամենանախնական վիճակում, և ուր հնարավոր չէր սայլի գործածությունը, և լեռնադաշտային գոտին, ուր փոխադրական միջոցը ոչ թե էշը կամ եզն էր, այլ սայլը, և ուր արորին ընկերանում էր գութանը, լծկանին՝ չորսոր, մանգաղին (մանկաղ) գերանդին (գերանդու) և այլն։

Մենք նախապատվություն տվեցինք ցորենի վարուցան-հունձակային, որովհետև իրականում ցորենի վրա էր հիմնված գյուղացիության գոյությունը. ցորենը ոսկուց ավելի թանկ էին գնահատում, ասում էին, թե՝ «ոսկին չես ուտի. ցորենը ուտիս կա»։

Նույնիսկ փոխանակության գները հիմնված էին ցորենի վրա. ցորենով բնորոշում էին անասունների, կաթնամթերքի արժեքը, նույնիսկ աշխատավարձի վճարման սակը. մի խոսքով ցորենը ամեն ինչ էր. ով ցորենով ապահովված էր, նա ինքնաբավ էր և այդ էր պատճառը, որ ի մասնավորի հայերը մեծ նշանակություն էին տալիս ցորենի ամենակարող ուժին և այն անվանում էին նաև «սրբազան պատառ»։ Բայց և այնպես երաշտի, բնական աղետների, թշնամու ավերածության կամ պատերազմների հետևանքով, երբ ցորենի բերքը պակասում էր, դիմում էին նրա օժանդակներին՝ գարուն, կորեկին, կլկին, տեղ-տեղ էլ լազութին (եգիպտացորեն) և դրանց միջոցով ապահովում հացի պակասը։

Անհատական սեփականություն կազմող հողից ստացված արդյունքով յուրաքանչյուր տնտեսություն աշխատում էր ապահովել իր հացը։ Այն չէր դիտում որպես վաճառքի կամ փոխանակության միջոց։ Կիսարարությամբ ստացված բնամթերքը նույնպես ծառայեցնում էր նույն նպատակին, միայն ստացված արդյունքի բաժանումը տրվում էր այլ սկզբունքով։

Կիսարարության տրվում էր այն հողատարածությունը, որի տերը միջոցներ չուներ մշակելու այն։ Կիսարարության տրված արտերի մեծամասնության տերերը գյուղացիներ լինելով հանդերձ, գյուղում չէին ապրում, բայց և այնպես չէին վաճառում իրենց արտերը, դա նկատելով նվաստացում և օջախի դեմ մեղանչում, ուստի տալիս էին հողի պակաս ունեցող գյուղացիներին մշակելու, հետևյալ պայմաններով՝ հողը մշակման վերցնող գյուղացին պարտավոր էր արտը վարել, սերմը ցանել, ջրել, հնձել, կալ փոխադրել, կամնել, երնել ու երբ կարգը գալիս էր թենը չափելուն, նախ տալիս էր պետության տասնորդը, զատում սերմը, վճարում պահնորդին հասանելիք բաժինը. աղքատներին տրվելիք խարման չալխը տալու մնացյալը հավասար բաժանվում էր մշակողի և մշակության տվողի միջև։

Լինում էին նաև դեպքեր, երբ շրջկենտրոնում ապրող ոչ հողատեր արհեստավորները և մանր առևտրականները, առավելապես նախկին գյուղացիներ, թեև սեփական կալվածներ չունեին, բայց արտեր էին գնում և կիսրարության տալիս, տարեկան իրենց բնաղունը ապահովելու համար։

Ամենավտանգավորն աղայական, ամիրայական-կալվածատիրական շահագործումն էր։ Կային բնակավայրեր, առավելապես Դերջանում, Զարսանջակում, Քղիի քաղաքամերձ դաշտային շրջաններում, որոնք ունեին ոչ թե կալվածներ, այլ գյուղեր։ Այդ գյուղերի բնակչությունը հողազուրկ էր, ոչ արտ ուներ և ոչ էլ լծկան, այդ բոլորը պատկանում էին աղային, բեկին, նույնիսկ տների սեփականության իրավունքը պատկանում էր կալվածատիրոջը, իսկ հողը մշակող, բերքը արտադրող գյուղացին պարզապես իրավազրկված մշակ էր, ու համազոր էր գերուն։

Կալվածատիրական այդ ձևն էլ բաժանվում էր երկու կարգի՝ վարձկան ծառաներ, որոնք ընտանյոք գտնվում էին աղայի տրամադրության տակ և ենթակա էին նրա բոլոր քմահաճույքներին, ապրում էին աղայի տրամադրած գետնափոր բնակարանում, աշխատում, արտադրում էին առանց որևէ վարձատրության, միայն ուտում, հագնվում և ապրում էին աղայի հաշվին։ Կինը կթվորուհի էր, երեխան գառնարած, մեկը՝ հովիվ, մյուսը՝ հողագործ, վերջապես, աղայի սեփականությունը, ենթակա վաճառքի՝ կալվածի կամ գյուղի վաճառման ժամանակ, երբ փոխանցվում էր նոր տիրոջը, որպես շարժուն ստացվածք, անբաժան մաս կազմելով անշարժ կալվածքի, որոնք անցնում էին ձեռքից-ձեռք և աշխատում նույն պայմաններում։

Երկրորդ ձևը կիսրարությունն էր, բայց ոչ նույն պայմաններով, ինչ սովեց կիսրարության բաժնում։ Այստեղ կիսրարի իրավունքը տարբեր էր։ Աղան տալիս էր ամեն ինչ, գյուղացին իր հաշվին, իր հացով ու ջրով աշխատում, վարում, ցանում, հնձում, կալսում էր աղայի փոխադրական միջոցներով և լծկաններով, կիսրարի իրավունքներով։ Այդ իրավունքը սահմանված էր աղայի կողմից և կախում ուներ նրա բարյացակամությունից։ Նման պարագաներում աղան ստանում էր, արտադրանքի չորս մասը, իսկ կիսրարին, որպես աշխատավարձ, տալիս էր մի մասը, այսինքն՝ աղան ի դիմաց իր կալվածի, տված սերմացուի և լծկանի, ստանում էր 80, իսկ բուն աշխատողը, արտադրողը՝ 20 տոկոսը։

Այն գյուղերում, ուր ապրում էր աղան կամ բեկը և ուր ընդհանուր գյուղի սեփականությունը իրենը չէր, այլ կային և անհատական սեփականատերեր, սրանք ունեին իրենց արտերն ու լծկանները և սեփական տնտեսությունը. իսկ աղան իր կալվածները մշակում էր մարապանների միջոցով։ Նման պարագաներում սեփականատերը պարտավոր էր իր լծկանով, իր աշխատավորով անվճար վարել նաև աղայի հողը, քաղվորներ տալ, շինարարության պարագային բանվորներ տրամադրել, անտառից փայտ փոխադրել, ծնունդի, մահվան, թլպատման և հարսանիքի ժամանակ նվերներ տալ աղային և այլն։

Մենատնտեսության ընազավառում, բացի իրար ըրղատ, լծկան, փոխադրական միջոցներ փոխ տալուց, կային և համագործակցական ձևով հավարարար աշխատելու պայմաններ։

Այն գյուղերում, ուր մի շարք սեփականատերերի արտերը մոտ էին իրար, և կամ մեզրե կոչվող բնակավայրերում, ուր տասնյակ ընտանիքներ էին ապրում, հաճախ համագործակցաբար կատարում էին վարն ու ցանը, հունձն ու կալը, և արտադրանքը բաժանում ըստ հողատարածության և աշխատող ձեռքերի մասնակցության։

Նման շեներում կալերի ժամանակ նախ սերմացուն զատում, զղրի տասնորդի, եթե հայ էին՝ եկեղեցու, իսկ եթե քուրդ՝ օջախի փիրին տրվելիք բաժինները առանձնացնելուց հետո մնացյալը բաժանում էին ըստ հողատարածության, ըստ աշխատանքին մասնակցող մարդկանց և լծկանների համեմատական թվի։ Այս ձևի համագործակցությունը կատարվում էր առավելապես բիր տնտեսություն ունեցող փոքր շեներում և մեզրեներում կամ այն գյուղերում, ուր վարելահողի պակաս էր զգացվում։

## ԴԱՇՏԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Դերսիմը բարձրաբերձ սարերի, անդնդախոր ձորերի, անտառածածկ լեռների, հսկայական ժայռերի երկիր էր, այդ պատճառով էլ բարձրավանդակներում ապրող գյուղացիությունը տառապում էր հողի սակավությունից։

Այս գոտում վարուցանքը կատարվում էր նախնական միջոցներով։

Արորները երկու տեսակի էին՝ տափարակ ոտքերի արորի առատամի և ձողի միացման միջոցը ավելի լայն էր և խորը ակոսներ էր բաց անում, իսկ մյուսը ավելի նեղ ողնաշարով, բայց ավելի տ-